ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ 76

«12» դեկտեմբերի 2019 թվական գյուղ Մայիսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ <<ՎԱՀՐԱՄԱԲԵՐԴԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի ԹԻՎ 73-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի ավագանին ո ր ո շ ու մ է.

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի <<Վահրամաբերդի երաժշտական դպրոց>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների 2020 թվականի քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն N 1 հավելվածի:

2.Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 27-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի <<Վահրամաբերդի երաժշտական դպրոց>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների 2019 թվականի քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 13-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին>> թիվ 73-Ա որոշումը:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2020 թվականի հունվարի 1-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ

ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

	Կողմ՝	*Դեմ՝*	*Չեռնպահ՝*
ՄԱՆՈՒԿ ԱՌԱՔԵԼՅԱՆ՝	---------v---------	----------	----------
ՌՈՒՍՏԱՄ ԱՌԱՔԵԼՅԱՆ՝	---------v---------	----------	----------
ՀԱՄԼԵՏ ԳԵՎՈՐԳՅԱՆ՝	---------v---------	----------	----------
ԱՐՏՅՈՄ ԶԱՔԱՐՅԱՆ՝	---------v---------	----------	----------
ՍԼԱՎԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ՝	---------v---------	----------	----------
ԼԵՎՈՆ ՀՈՎՍԵՓՅԱՆ՝	---------v---------	----------	----------
ԳԱՐԵԳԻՆ ՄԿՐՏՉՅԱՆ՝	---------v---------	----------	----------
ԿԱՄՈ ՂԱՆԴԻԼՅԱՆ՝	---------v---------	----------	----------
ՋԱՆԻԲԵԿ ՂԱՖԱՐՅԱՆ՝	---------v---------	----------	----------

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՇԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԿԱՐԵՆ ԱՐՇԱԿՅԱՆ

«12» դեկտեմբերի 2019 թվական

գյուղ Մայիսյան

Հավելված 1
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Մարմաշեն համայնքի ավագանու 2019 թվականի
դեկտեմբերի 12-ի թիվ 76 որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ <<ՎԱՀՐԱՄԱԲԵՐԴԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Աշխատակիցների թվաքանակը՝ 5:

Հ/Հ	Հաստիքի անվանումը	Հաստիքի քանակը	Պաշտոնային դրույքաչափը	Ընդամենը
1	Տնօրեն	1	1	110000
2	Հաշվապահ	1	0.5	93000
3	Դաշնամուրի դասատու	1	1	93000
4	Սոլֆեջոյի դասատու	1	1	93000
5	Դհոլի դասատու	1	1	93000
	ԸՆԴԱՄԵՆԸ	5		482000

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ՄԱՐՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԿԱՐԵՆ ԱՐՇԱԿՅԱՆ